



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Արևիկի Ծառայություն

Ձ(47.925)

Ա-73



9(47.925) ✓

24 JAN 2006

Ա-73

ԱՐԽԵՆ ՓԱՐՍԵՆՑ

# ԱՐԽԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ



ԿՈՎԿ. ՀԱՅ-ԹԱԹ. ԱՐԻԻՆԱՀԵՂ. ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ



ԳԻՆ 20 ՓԱՐԱ

ԿՆԳՐՈՆԱՏԵՂԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԿԱՅԱՌԱՏՈՒՆ, ՄԱՀՄՈՒՑ-ՓԱՆԱ

Կ. ՊՈԼՏՍ

1910

25.02.2013

505-1  
47.82

19 AUG 2011

Ա-91

61735. ա հ

# ԱՐԵԱՆ ԶԱՆԱՊԱՐՅՈՎ

## ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ-ՅԱԹ. ԱՐԻՒՆԱԼԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

(ԲՈՒՍԱԿԱՆ ՆԵՆԳԱՄԻՏ ՔԱՂԱՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ)

### Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Բ Ը

Դեռօրը կատարում էր:

1902 թ. Հոկտ. 14-ի աշնանային զովասուն ու գեղածիծաղ օր մ'էր, օդը մաքուր, երկինքը պայծառ ու ջինջ, արեգակը իր իրիկնամուտի աղօտ ցոլքերու ոսկեճաճանչ ու թոյլ ճառագայթները տարածեր էր Կովկասի թ. քաղաքի և անոր շրջակայ մերկապարանոց բլրակներու վրայ, որոնք Տավրոսեան փոքրիկ լեռնաշղթայի մը նման եկեր ու շրջափակեր էին այդ մեծ և ընդարձակ քաղաքի երեք կողմերը և կարծես կը ջանային սրգիլել զայն մասնակցելու դուրսի՝ իր քոյր քաղաքներու համեմատաբար աւելի ազատ և տանելի կեանքին... : Կէս օրը անցած և իրիկնամուտի ժամանակ էր : Քաղաքի ընակիչները, որոնք կը բաղկանային զանազան ազգերէ ու ցեղերէ, ամբողջովին զբաղուած էին իրենց աւօրեայ գործերով ու պարագմունքներով. կեանքը, իր անտեսական ու քաղաքական պէսպէսագոյն պահանջներով, ծանր ու ճնշող կոչմարի մը նման եկած ու ծանրացած էր անոնց յոգնատանջ ուսերի վրայ և մոռցնել առւած էր զիրենք շրջապատող բոլոր այն տխուր և իրական պայմանները, որոնց մէջ պէտք էր որոնէին իրենց տանջուած ու չարչարուած կեանքի բոլոր պատճառները : Պէտք էր աշխատել, աշխատել ու ապրել, աճա սովորական մտածմունքը այդ մարդկանց, որոնք հնարաւորութիւն իսկ չէին ունեցիր յստաբարբուրելու կազմակերպութեանը այն մեծ գործին, որ քանի մը ժամ վերջ պիտի դար փոթորկելու ամբողջ Ռուսաստանը, Կովկասը և հետեւաբար իրենց իսկ «հանգիստ»... ու «անդորր»... կեանքը :

61735-23

61735-23

երևույթը նոր չէ .

Ինչպէս մէն-մի բանապետական երկիր, նոյնպէս և ուր-աստանը որպէս այդպիսին, կը կառավարուէր բացարձակ միապետական օրէնքներով, կարք ու կանոններով: Ժողովուրդը երկրի այդ հարազատ զաւակը, ո՛չ մէկ մասնակցութիւն ունէր իր նուիրական հայրենիքը կառավարելու պաշտօնը ունեցող մարմիններու մէջ: Տիրող դասակարգը, որոնց ձեռքերու մէջ կը գտնուէր ամբողջ երկիրը կառավարելու բարձր իրաւունքը, կը բաղկանար այդ ժողովրդի տականքները կազմող գանազան սնկայտ ծագում . . . ու սերում . . . ունեցող «աւելնուական» ներկց, «կալուածատէր» ներկց, և բուրժուաշ-կաստակիսաներկց, որոնք անարգել կերպով ինկած էին աշխատաւոր և միշտ ընչազուրկ ժողովրդի վրայ ու կատարեալ անյագօրէն կը ծծէին անոնց ս.մ.ն.ակնասունակ ուժերը, աշխատաւորի, գործաւորի բոլոր արդար իրաւունքները և մասնակցով զայն կարօտութեան ու թշուառութեան անողորմ ճանկերուն, որու մէջ, լուս ու մուռնջ, մարտիրոսագրութիւն կոչուելու արժանի կեանքով մը կապրէին, պատրաստ ամէն բօսէ գլխակոր համակերպութեամբ մը տանելու բոլոր սին գրկանքները, որունք նուիրագործուած լլալով պետական օրէնքներով, պարբերաբար կիրարկութեան կը դրուէին այդ ապարտիտ երկրին մէջ:

Ճիշտ է սակայն, որ Ռուսական խարխուլ պետութիւնը, Արեւմտեան Եւրոպայի քաղաքակրթութեամբ ազգերու նման ունէր իր պետական կազմը, իր բոլոր ստորաբաժանումներովը հանդերձ, այն է՝ նախարարութիւնները, դատարանները և վերջապէս արդարագատութեան հիմնարկութիւնները իր բոլոր «արգարազատ պաշտօնեա» ներովը հանդերձ, բայց ասոնք բոլորն ալ կանոնաւոր իրենց ձեւերի մէջ էականապէս մէկ ոգւով, մէկ սկզբունքով, մէկ նպատակով էին ներշնչուած, զուրկ խզճի և զգացումի ամենատարրական ազատութիւնէ, բոլորն ալ ենթարկուած էին բարձրեւեկ եկող մէկ հրամանի, մէկ պատգամի, որու նպատակը ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ, հալածել ժողովրդին և զրկել զայն իր մարդկային բնական բոլոր իրաւունքներէն, քամիլ անոր ամբողջ արիւնը ի փառս և ի շահ տերոզ, ձրիակեր և օտից մինչև գլուխը շուայտութեան մէջ թաղուած կարգ մը անգուժ արարածների, որոնք և կը կազմէին երկրի կառավարութիւն կոչուող մարմինը:

Պետական դատարան կոչուած հիմնարկութիւնները, որոնց գործունէութեան, իրաւասութեան սահմանները նախապէս բարձրից որոշուած ու գծուած էին, ո՛չ մէկ ուշադրութիւն չէին դարձնել ժողովուրդի ամենաարդար իրաւունքներու պաշտպանութեան արդար գործին վրայ: Վա՛յ այն մարդուն, որ երեւոյթներէն խարուած, ո և է գործի մը համար արդարադատութեան դուռը դիմելով, օրինական ճանապարհով իր բանադարուած իրաւունքներու պաշտպանութիւնը խնդրելու խաւալի յանդգնութիւնը ունենար:— Որք պատրաստ էր արդէն, և կը մնար որքան կարելի է շուտ և շատ փեղտել զայն, որու մէջ սակայն, մեր պաշտօնեաները, կամ աւելի լաւ է լսել, պետական որսկանները, պէտք եղած բոլոր հրմտութիւնները ունէին և գործը կատարեալ յաջողութեամբ առաջ կը տարուէր և կը գործադրուէր երկու կողմերու վրայ, թէ պարտաւորով և թէ պարտապահանջի: «Նե յի եակարև նե Կեքապ» ի քաղաքականութիւնն էր այդ, որ ի գործ կը դնէին տն, երկու կողմերի վրայ, առաւել կամ նուազ չափով:

Վ

Ռուսական պետութիւնը Կովկասին տիրապետելուց յետոյ, քաղաքակրթին հմայուած լլալով այդ փոքրիկ երկրի գերաշոյն առաւելութիւններէն, նամանաւանդ իր քաղաքականութեան (այլաբնակարայական) ձգտումներու հեռապատկերի յաջողութեան սին փառքերէն տարուած, իր առաջին գործը նորեկ նուաճել Կովկասի բնիկ ազգերը, որոնց մէջ ամենաբլխաւորները կը հանդիսանային Հայերը և Վրացիները, որովհետև, անոնց ձեռքերու—ի մասնաւորի հայերու—մէջ կեդրոնացած էին անգլական թէ առեւտրական, թէ արդիւնաբերական և թէ երկրագործութեան բոլոր ճիւղերը և այդ իսկ զատճառով, վերջինսր դարցեր էին այդ երկրի անտեսական լեանքի վրայ կատարեալ տիրապետողները: Պէտք էր ուռաճել այդ ազգերը, որպէս զի ապագային այդ ազգերու կողմէն, այս կամ այն կերպով որ և իցէ արդէնք մը չգար խանդարելու իր հետեւած ուսուցման քաղաքականութեանը, զոր կը ջանար Կովկասի մէջ եւս կիրարկել: Լրացիները որոնք իրաւական տեսակէտով այդ երկրի նաական տէրերն էին, դժբաղդաբար դեռեւս տեսակ մը նապետական կեանքի մէջ գտնուելով, ծանրաբեռնուած էին

աւատական կարգերով : Անոնց քաղաքական և ընկերային կեանք, իր բոլոր կողմերովը ամփոփուած էր կարգ մը «կնեազ» ներու (ազնուական ծագում ունեցող) ձեռքերու մէջ, որոնք վրացիական թագաւորութեան ժամանակներէն ի վեր իրենց անձնական սեփականութիւն էին դարձուցեր վրացիական գիւղերու մեծագոյն մասը և այդպիսով սեփականազրկելով երկրի աշխատող, ագիւնատրող մեծ դասակարգը, ստեղծեր, յառաջ էին բերեր Ֆէօդալական կասարեալ տիրապետութիւն մը, որու ծանրութիւնը սակայն ժողովուրդի նամար զգալի իսկ չէր . . . : Եւ անա այդ նպաստաւոր պայմաններու տակ Ռուս կառ. Կովկասեան ներկայացուցիչները կարողացեր էին իրենց կողմը գրաւել Վրացի «կնեազ» ները և անոնց միջոցաւ ազդել հասարակ, ռամիկ ժողովրդի զգացումներուն վրայ : Եւ որովհետեւ աշխարհի բոլոր կողմերի մէջն ալ գտնուած նարուստ, դրամատէր դասակարգերուն նամար, ազգ. ազգա-սիրական գաղափար կոչուած վսեմ զգացումը, այնչափով գոտայութիւն ունի, ինչչափով որ այդ երկիրը, այդ ազգը կարող է, ընդունակ է ծառայելու իրենց (դրամատէրներին) նիւթական գծուծ շահերի յառաջագիմութեան ու զարգացմանը : Այդ պատճառով, մեզի նամար երբէք զարմանալի չէր թէ ինչու համար այդ «կնեազ» ները աւելի մօտ հակուած էին սեղանական իշխանութիւններին, քան թէ իրենց նարազատ ժողովրդին ու հայրենիքին : Այդպէս, Ռուս. կառավարութիւնը իր շուրջը հաւաքած ունենալով այդ փոքրոցի արարածները օժտեց զանոնք պետական զանազան շքանշաններով, հողային այլեւայլ առանձնաշնորհումներով ու այդ ճանապարհով կառուցելով զանոնք, յաջողեցաւ ձեռք ձգել այն պաշտօնական վաւերաթուղթը, որու հիման վրայ Վրաց ազգային անկախութիւնը, ինչպէս նաև անոնց կրօնական բարձրագոյն իշխանութիւնը փոխանցուեց Ռուս. կառավարութեան, և այս կերպով «կնեազ» ները իրենց իսկ հաւանութեամբն ու ձեռքովը Ռուսական ազգային աւազանին մէջը ձգեցին Վրացի ազգութիւնը, որու ազգային գոյութեան իրաւունքը, միջնադարեան բարբարոս ուժերն իսկ անկարող եղած էին բնաջնջել : Եւ այս կերպով, այն հեռաւոր նպատակը, զոր կը յետապնդէր Ռուս. կառավարութիւնը, հետհետէ իրականանալու ուղիին մէջ պիտի մտնար՝ եթէ ուրիշ, աւելի երիտասարդ

գիտակից և տոկուն ուժերի գոյութիւնը ուղղակիօրէն չերթաին խանգարելու սկսուած այդ գործը : Կառավարութիւնը շատ լաւ գիտէր այդ ուժերի գոյութիւնը, գիտէր և կը ճանաչէր իսկ զայն : Այդ ուժը, այդ գոյութիւնը, նոյն ինքն հայ ժողովուրդն էր, այն ցեղը՝ որու շնորհիւ կարողացած էր տիրապետել այդ սքանչելի երկրին, որու մասին երկար տարիներ շարունակ երազեր էին իր նախնիքները, և զոր վերջիվերջոյ հայագգի Տէր-Ղուկասեանների և Լուսիս-Մէլիքեանների գիտութեամբ հմայիչ տաղանդներու շնորհիւ կասարուեց և իրականութիւն դարձաւ . . . :



Հալածանքները. — Միտպետական կառավարութիւններու համար իրենց հպատակ և ոչ-հպատակ փոքր ազգերը ճնշելու և շարչարելու պատրուակներ ու միջոցներ չեն պակասիր. և դեռ աւելի արգահատելին կայ որ, շատ անգամ, գրէթէ միշտ, ի գործ դրուած այդ միջոցները, որոնց բացաձակ նպատակն էր ենթակայ փոքրիկ ազգերու խոր-խոր գերեզմանները փորել — կը քողարկուին այնպիսի բարենպաստակ ցանկութիւններով, որ կարծես թէ այդ ձեռնարկութիւնները մարդասիրական մեծ բարեգործութիւն մ' է զոր կուզեն ընել իրենց հպատակ և ոչ-հպատակ այն փոքր ազգիչրու համար, որոնց անկոչ խնամակալներն են եղած և որոնց բնաջնջումը կը կազմէ իրենց ձգձարիտ նպատակը :

Կովկասի ընդհանուր Փոխարքան — Իշխան Գոլիցինը — իր Փոխարքայութեան պաշտօնի երկարամտայ ժամանակաշրջանի մէջ, յաջողած էր թափանձել այն գաղանիքներու խորքը, որու շնորհիւ Հայ ազգը կարողացեր էր անխախտ կերպով պահպանել իր Ազգային գոյութիւնը և անսայթաք կերպով գիմադրել բոլոր այն բռնակալական ուժերին, որոնց վեց հարիւր տարիներէ ի վեր ենթարկուած էր ան : Այդ ուժը, այդ անխորտակելի պատուարը, Հայ Եեկեղեցին և Հայ դպրոցն էր, որոնք անխորտակելի պարսպներու նման եկեր ու շրջապատեր էին Հայ Ազգութիւնը և կը պաշտպանէին զայն իր ամբողջութեանը մէջ . . . : Գաղանիքը գտնուած էր և կը մնար որոշելու այն միջոցները, որոնց կիրարկումով կարելի ըլլար թուլացնել, տկարացնել այդ ուժը, ու հայ ժողովուրդն ալ դնել այն դժուարին վիճակին մէջ, որպիսին դրած էր

Վրացիները և հետեւաբար, հարթել իր ճանապարհը այդ փոքրը և սակայն ամփոփ ու կենսունակ ուժերէն, որոնք արգելք կը հանդիսանային Ռուսական նենգամիտ նպատակներու գործադրութեանը :

Եւ գործը սկսուեց :

Թիֆլիսի Փոխարքայանիստ պալատի ընդարձակ ու ճերմակ դահլիճներու մէջ, թաւշապատ fauteuilsներու վրայ բազմած մեծ բռնապետի վարձկան պաշտօնեաները, ամբողջովին խորատուզուած համառուտական զաղափարների վտանգաւոր և խաղառ անխրականանայի մռայլ մտքերու մէջ, ձեռնարկեր էին մշակելու այն օրէնքները, որոնցմով պիտի կառավարուէր տեղական Հայ ազգաբնակիւթիւնը : Եւ այսպէս, կարճ ժամանակուայ մէջ պատրաստուեց ու երեւան եկաւ այդ, որու հիման վրայ Կովկասահայերի Ազգային բոլոր հաստատութիւնների սեփականութիւնը եղող բոլոր կալուածների, ինչպէս նաեւ պատրաստի ամբողջ զբաժնների և ըն. և ըն. հարստութիւնների գրաւումը որոշող և սահմանող օրէնքն էր այդ, որ վաւերացուած և հրատարակութեան էր արուած երկրի «բարեխնամ և ողորմած» Կայսեր կողմէն :

Իւրացնել, գրաւել Ազգային սեփականութիւնը կազմող բոլոր այն հարստութիւնները, որոնք ամենազլխաւոր ապահովող ուժը կը կազմէին Հայ Եկեղեցիին ու դպրոցին, այդ պարզապէս կը նշակէր ստիպել Հայ ժողովրդին իր իսկ ձեռքովը գոցել իր Ազգային բաղձաթիւ եկեղեցիները և դպրոցները, — Ազգի գոյութեան հիմնաքարը կազմող այդ նուիրական հաստատութիւնները, ու սեւ գիծ մը քաշել Հայ Ազգի Ազգային գոյութեան նուիրական իրաւունքին վրայ, իսկ ապաղայ մատող սերունդը, Հայ Ազգի այդ հսկայ և ջղոջ կոճըր տանել ու լեցնել առւս պետական գլխադիօններու (դպրոց) մէջ և կրթելով զանոնք առւսական սղուով, մեռցնել անոնց արտերու մէջ այն ամէնը, ինչ որ Ազգային անուն և դրոշմ կրէ, և այդ կերպով, Հայ մատող սերունդից պատրաստել Կովկասի ապագայ Ռուս երիտարարողութիւնը ու դարձնելով զանոնք իրեն համար անխորատակելի պատուանդան մը, ջանալ հասնելու իր նենգամիտ նպատակներին :

Երազներ, երազներ և անվերջ երազներ :

Այդպէս չեղաւ : Պետութեան կողմից սահմանուած և հրա-

տարակուշեան արուած այդ օրէնքները — մեր Ազգ. կալուածներու և այլ հարստութիւններու գրաւումը — բարեբախտաբար եկան ուշաբերելու մինչև այդ ժամանակ իրենց («հաւատարիմ հպատակութեան անձնուէր զգացունենիր Ռուս. Գահի տակը դնող») հլու-հուսատարիմ Հայ ժողովրդին, որոնք այն վաղահաս անակնկալներին հանդիպելով, հիասթափուեցին ցնցուեց և մէկ ստոււմով ոտքի կայնգնելով, սկսեցին ուշիու-շով դիտել այն հսկայական թակարդը, որ զետեղեր էին իր շուրջը իր թշնամիները, և որու մէջ կը ջանային թաղելու Հայ ժողովուրդը իր ամբողջ անցեալովն ու ներկայովը . . . :



Խորհելու եւ գործելու ժամանակը եկած էր : Ազգային ընդհանուր գոյութեանը սպառնացող այդ մեծ վտանգը կանխելու, չեղոքացնելու համար հաւաքական գործունէութեան ամենամանրաժեշտ պահանջը, կենդանի պատկերի մը նման, եկեր ու ցցուեր էր տեղական Հայ ժողովրդի իրաքանչիւր անհատի առաջ : Ահա այդ ծանր, դաժանագին բոսէներին, մեր ամբիփուած ուժերը, յանձին Հայ Յեղափոխական Կուսակցութիւններու, անպայմանօրէն հարկադրուած էին դուրս գալ և իրենց ամբողջ արամադրելի ուժերովը, կարողութեան բովանդակ թափովը պաշտպան հանդիսանալ այն ժողովրդին, որու հարազատ զաւակներն էին և որու համար շատ մեծ պարտականութիւններ ունէին կատարելու . . .

Հայ Յեղ. Կուս. մէջ աւագագոյնը եղող Հնչակեան Կուսակցութիւնը, շատ կանուխէն զգացած բլլալով գոյութիւնը այդ վտանգին, ինքնարերաբար, իր կոչումին համապատասխան կերպով պարտականութիւն էր ստանձներ յանուն Հայ ժողովրդի անօրինելու արդար պատիժը այն արարածին, որու սաղաշելական մտքերու հարազատ ծնունդն էր վերոյիշեալ օրէնքները : Պէտք էր մէջտեղէն վերցնել այդ «գայթակղութեան քարը», իսկ ատոր համար պէտք եղած այն միջոցները, որոցմով պէտք էր պատժել այդ հատարակայ թշնամոյն, կանխապէս որոշուեր ու պատրաստուեր էր և 1902 թ. Հոկտ 14ի (ըստ ԹՐԶ.) արեգակի թոյլ ճառագայթներով լուսաւորուած թ. քաղաքի օթասուն բլրակի մը վրայ, և այն լայնատարած ճանապարհի մէջ, որմով յաշխի կը սլանար նենգամիտ Իշխան-Փոխարքայի եռաձի կառքը՝ տանելու համար զինքը հին խան-Փոխարքայի եռաձի կառքը՝ տանելու համար զինքը հին ժամանակներէն մնացած, վարդաստան կոչուելու արժանի այն



հիասքանչ պարտէզը, որուն տեղացիները «Բաղանիքական» այգի անունը կուտան: Հոն, այդ լայնատարած ճանապարհը եզրափակող կարճ ու փշոտ մացառներու մէջ, ժամերով դարանամուտ եղած Հնչ. անձնուէր կտրիճները, արծիւի արագութեամբ դուրս թռչելով իրենց անհերքնկալ թաքստոցներէն, շրջապատեցին սուրացող կառքը, որու չնչայեղձ ձիերի փոփրալից բերանները և քիթերու մեծկակ խոռոջները զարձուրելի պատկեր մը կուտային այդ խեղճ կենդանիներին, որոնք, իրենց հերթին, ակամայ գերիններն էին այդ բունակալ արարածին: Կառքը կանգ առաւ և անոր մէջ բազմած կարմիր բունաւորը սարսափահար զգաց որ հաշուէրարոքեան, արդարադատութեան ահռելի բազէնը հասած էր, և այլալուծած աչքերով, գունատուած դէմքով դիդեց ան ծակծկող շողքերը այն արդարադատ դաշոյներուն, որոնք կայծակի արագութեամբ փայլատակեցին իր մերկամազ մեծ գլխի վրայ... Օ՛ Հայաստանցի երիտասարդի Ազգային վրէժինդրական անդուստողին, իր բարբոքման կատարելութեան աստիճանին հասած ըլլալով, դիդապաստ գետին փռեց իր ստացած պատժին կատարելապէս արժանի զո՛ր, որու սեւացած արիւնը գնաց պղծելու այն մաքուր հողը, որո՛ւ անարժան հերն էր ինքը: Բունաւորը ինկաւ, իր ճաղատ գլխի վրայ ստացած երէք վէրքերից, որոնք սակայն, անկարող եղան գերեզման տանելու գինքը: Ինկաւ բունաւորը և, վերջին անգամը ըլլալով, զո՛նեց իր դեռօրինտ երէք երիտասարդներ, որոնք զո՛ն գացին օգնութեան հասնող կօզաքներու մահացուցիչ գնդակներին, և որոնց վտիտ դիակները գնացին հանգչելու օտար հորիզոնի տակ, անհարազատ, հեռաւոր գերեզմանատան մը անչուք մէկ անկիւնին մէջ, առանց գերեզմանատեղիին հեաքն իսկ ձգելու:

Այսպէս, դեռօրը կատարուեց, բայց դժբախտաբար ստորմով ո՛չ թէ ամէն բան վերջացաւ, այլև ինդհակառակը, վրէժինդրական այդ արդար ակտը, զոր կատարեց Հնչ. Կուս. եկաւ առաջին ազգանշանը առլու մօտաւոր երեւմանը այն մեծ եղիւնին, զոր պատրաստեր էր Ռուս. կառ. և որու մէջ ինկած հազարաւոր անմեղ զո՛ների թարմ արիւնները կոչուած էին գալ մաքրելու ազատութեան այն լուսաւոր ճանապարհը, որու մէջ պիտի մտնար Կովկ. ընդհանուր քաղաքական կեանքը:

Բ.

Բունապետութիւնը որչափ որ խիստ և անուղք էր, նոյնչափ ալ անհեռատես և անփորձ էր: Ան դեռեւս չէր կարող հասկնալ սա պարզ ճշմարտութիւնը թէ, մարդկային կեանքին մէջ ի գործ դրուած մէն-մի շարիքին տրամաբանօրէն կը հետեւի և բարիքը: Կառավարութիւնը որքան որ կը սաստկացնէր իր բունապետական սեղմող, ճնշող, ժողովրդի քաղաքացիական ամենատարրական իրուէնքներն իսկ սահմանափակող օրէնքները ու կարգերը, միւս կողմից, նոյնչափ և աւելի կը նպաստէր ժողովրդի, այդ մեծ և սակայն քնած առիւծի վերագարթնումի գործին: Այսպէս, պետութեան կողմէն վարձուած բազմաթիւ յետաշրջական տարրեր ցրուած էին Կովկասի բոլոր կողմերը, նամանաւանդ թրքական գաւառամտերու մէջ և կը ջանային տեղական ազէտ թաթարները գրգռելու Հայերու դէմ, յօրինելով այնպիսի աներեւակելի զրպարտութիւններ, որոնց մասին մտածել իսկ անկարելի էր: Այդ ճիւղները համոզեր էին մահմետական տարրերին թէ, «Հայերը Կովկասի մահմետական ժողովուրդը նուաճելու պատրաստութիւններ կը տեսնան, (եղեր) որպէս զի, յետոյ, Կովկասը անջատելով Ռուս. պետութիւնից, վերականգնեն Հայկական հին թագաւորութիւնը, վերաշինեն Անիս, (Հայոց հին մայրաքաղաքը) և ին. և ին.» : Թունաւոր և արիւնտ սերմեր, որոնք, դժբախտաբար, իրենց զարգանալու համար չա՛տ նպաստաւոր և չա՛տ պայարտ հող կը գտնէին մահմետական տարրի սմայի մտքերու մէջ: Միւս կողմէն, Կովկասի բանտերը և Ռուս. զարձուրելի աքսորավայրերը լիցուեր էին քաղաքական հանցանքներով դատապարտուած Հայ բանդարկեալներով: Հայ միտքը, այդ մտքի հարազատ ծնունդը եղող Ազգ. նշնագրիտակցութիւնը, Սիբիրի, Ռուսական այդ հեռաւոր առցարանների մէջ կուղէին փակել, փակել ու խեղդել լայն... հեղնանք— ջանալ ոճնչացնելու գոյութիւնը Ազգի մը, որու ծագումը շատ հին է, հին ու ամուր, որու Ազգային լոյսութեան իրաւունքը, ստանեակ դարերու անջնջելի կնիքով դրոշմուած ու նուիրագործուած է— կատարեալ մտացալին է եթէ չըսենք ուրիշ բան... Այո՛, կայ միջոցներ, որոնցով կարելի է աւելի դիւրին կերպով ձուլել փոքրիկ ազգու-

թիւնները, ձուլել, ապազգայտացնել, ու անէացնել զանոնք, միջոցներ, որոնք սակայն կը պակսէին Ռուս. կառավարութեանը և այդ պատճառով, ան առանց հետեւեանքների մասին մտածելու, առանց պատմութիւնից օգտուելու և զիմեց այնպիսի միջոցներու, որոնք հին հին դարերու մէջն իսկ տնկարող են եղած մեռցնելու Հայու սրգի մէջ անոր Ազգային գոյութեան պահպանման վառ զգացումը և ոչնչացնել Հայ Ազգութիւնը:

Որոշուած օրը հասաւ: Բաքուին, Ռուսական կարմիր մետաղեայ կուռքի շտեմարանը եղող այս սեւ քաղաքին էր վիճակուած ըլլալ առաջինը այն պետութեան, որու դադարիկ զանձին համար իւրաքանչիւր տարին հարիւր միլիոններով բուրլի կը մատակարարէր և աճ իր արդար վարձադրութիւնը կատանար: Դարերով շահուեալ, միմիանց քով ապրած, միմիանց դրացիութիւնը վայելած այդ երկու եղբայրակից ժողովրդները, ներքին դրդումներից մղուած, ինկած անարգ provocationի աւերիկ անցեալը, դարձեր էին փոխադարձաբար միմիանց արիւն խմող, միմիանց յշտող երկու կատաղի թշնամի ազգեր, այն պէս որ, կարծես թէ, այդ ժողովրդներու մէջ յարաբերական, դրացիական ո՛չ մէկ կապ գոյութիւն չէ ունեցեր:

Բաքուն, Կովկասեան եղեւնին առաջին զոնր եղող այդ գեթախտ քաղաքը, իր 150ի չափ ունեցած Հայ գոհերովը եկաւ կանխամտածած ու կանխորոշուած ազգանշանը տալու այլ ընդհանուր կոտորածներին, որուն պայմանադրական կերպով հետեւեցան Կովկ. միւս հարաշատ դաւաճները և զիւրերը:

Եւանդուն ու անկաշկանդ գործունէութեան ժամանակ եկած էր: Հայ Յեղափոխական Կուսակցութիւնները, որոնք մինչև այդ ժամանակ մէկը միւսէն բոլորովին հակառակ գաղափարներով տարուած անհաշտ ընթացք մը ունէին միմեան հանդէպ, այն ատեն հասարակաց ընդհանուր թշնամոյն առջ, մոռացութեան տալով իրենց սկզբունքային տարբերութիւնները և անցեալի ամբողջ անլուծելի խնդիրները, միմիան, համերաշխութեան եկած, արիարար, առանց ընկրկելու մտան ժողովրդի մէջ ու ստաճնելով մղուելիք արիւնատ

ընդհարումներուն առաջապահ մարտիկներու դերը, առաջնորդեցին զայն դէպի իր ճակատագրական կռիւի կարծրագոյն թաղերարեմը:

Այո՛, օրհասական այդ ծանր րօպէին, կենաց ու մահու խնդիրը, գոյութեան և չգոյութեան ծանր ու սպառնալից հարցն էր մէջանողը եկած: Պէտք էր պաշտպանուել ու պաշտպանել ինչ դնով ու իրաւունքով ըլլար այդ: Պէտք էր մոռացութեան տալ ժողովրդական-դասակարգային բոլոր հարցերն ու բաժանումները, պէտք էր, և անպայման անհրաժեշտ էր այդպէս ընել, որովհետեւ վտանգը այս կամ այն դասակարգին համար չէր, այլ հաւնագրային, հետեւաբար, ազգի բոլոր դասակարգերին ալ հաւասար չափով մահ կու պատնար:

Հայ հարուստը, դրամատէրը, բուժուս դասակարգը, որ մինչև այդ ժամանակ ամուր փականքներով կը լցած էր իր դրամարկիի հաստափեղկ դուռը Ազգ. այլևայլ պէպերուն առաջ, այնատեն րօպէի հրամայողական պահանջի առաջը ընկճուած, հեռո՛ւն, օդին մէջ կախուած տեսնելով ապագային անհրաժեշտօրէն խողխողուլիք իր սիրասուն դաւակնորու սրտակտուր հեռապատկերը, ակամայից, այլայլուած դէմքով ստիպուած եղաւ բանալու իր պօզպատեայ դրամարկիի ծանրաշարժ դուռը և տալ, տալ և տալ առատօրէն այն կարմիր կլորիկ կուռքերը, որոնց «փրկութեան ժամի» համար էր պահած: Այո՛, Ազգ. գոյութեան սպառնացող այդ աղէտալի ժամուն, ամեն ոք՝ օվ ինչ ոչ ունէր պարտաւորուած էր դուրս բերելու, սպաս դնել այն մեծ գործին, որու անունն էր ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ:

Հայ Յեղ. Կու., որոնք արդէն կուրի սապարէզին վրայ էին, որպէս միանոյր ու կենդանի ուժ մը, բարձրացուցին իրենց կարևորագոյն գլուխը, հնչեցուցին երենց սրաշագանի խորխոր ձայնը յանուն Հայ ժողովրդի բռնաբարուած Ազգային իրաւունքների: Ուժախալի և շատ հրահանգիչ էր տեսնել Հնչակեան և Դաշակցական քաջամարտիկ զինուորական խումբերու միացումը, եղբայրակցութեան այն ամենաբարձր և աւանդական զգացումները, որոնցմով համակուած էին անոնց

մաքուր և զգայուն սիրտերը . և միասին ձեռք ձեռքի տուած կուռի արիւնալի դաշտը կը վազէին , միասին կուռելու , միասին մեռնելու և չոն , միասին թաղուելու : (Միութիւնը գորութիւն է) ճշմարիտ խօսքը դարցեր էր կեանքի ամենամանհրաժեշտ պահանջը : Այդ համերաշխ գործունէութեան ճշմարիտ զօրութեամբը , օրերու մէջ կը տեսնուէին այնպիսի գործեր , որոնց պատրաստութիւնը կեանքի խաղաղ ժամանակի մէջ ամբաներու կը կարօտէին . բայց նաւաքական գործակցութեան ջանքերու շնորհիւ , ամենամեծ դժուարութիւնները իսկ չքացեր ու անհետացեր էին :

Այսպէս , հայկական բոլոր գաւառները , տասնութինգ օրուան մէջ շրջապատուեցին Յեղափոխական կուռող ուժերով , որոնք սկսեցին կազմակերպել տեղական Հայ ժողովուրդը , հայթայթելով անոնց բոլոր այն միջոցները , ինչ որ հարկաւոր էր ինքնապաշտպանութեան դիմող ժողովուրդի մը համար : Մենք ամէն ինչով կազմ ու պատրաստ ենք և բոպէ առ բոպէ կը սպասէինք մեր թշնամիների յարձակումներին , որ բարերախտաբար , շատ սպասեցնել չտուած մեզ , և հազիւ թէ քանի մը չարաթ անցած էր Բաքուի ծանօթ ընդհարումներէն , երբ հայաբնակ տեղերը սկսան շրջապատուիլ թաթարական արիւնուռչառ աւազակախմբերէն , որոնք իրենց մուսուանդութեան զզուելի բնագէներովը տարուած , սկսեցին արշաւել դէպի հայկական գիւղերը՝ կոտորելու , աւերելու և հրդեհելու համար այն ամէնը . ինչ որ հայու էր և հայու անուան կը կրէր իր վրայ . և օրը ցորեկով , մեր «բարեիմամ կառավարութեան» զոյգ աչքերուն առաջ , արեղակի պայծառ ցուքերու մէջ կը շողչողային թաթարական մերկ սուրերը , որոնց սուր սուր ծայրերովը պիտի պատուէին Հայ գեղջուկի կմախքացած , բայց առողջ ու վշտալի սիրտը , և անոր ստաք տաք արիւնովը պիտի գովայնէին իրենց պապական , այրուած ոգիները . . . : Բարբաբոտութեան այդ շատուածները , վայրենի մոնգոլներից սերած այդ այլակերպ մարդ-զաղամները իրենց նախճիրները յաջողութեամբ գործադրելու համար , Աստուծուն և Մարգարէին ալ օգնութեան կը կանչէին իրենց : «Եա Ալլահ , եա Ալի» բացականչ . կը դիմէին ամէն անգամ , երբ հայկական ո և ի ցէ

գիւղակի մը հանդիպելով , կը շրջապատէին դայն , ջանալով ներս խուժել իրենց համար գրաւիչ նախճիրները գործադրելու համար : Բայց իզո՛ւր , ո՛չ իրենց այդ թախանձագին աղաղակները , ո՛չ պետական զինուորներու ընկերակցութիւնը (\*) անկարող եղան գէթ նսւազագոյն (minimum) չափով իսկ դիւրացնելու իրենց գործը : Իզուր էր այդ ամէնը , ընդդիմութիւնը , որուն հանդիպեցան անոնք , շատ ուժեղ էր և առթաց յուսալատութիւնը կատարեալ : Այն «գեաւուր»ը որ դարերու երկար ընթացքի մէջ բայի քաղաքակրթիչ , շինարար դերից երեւոյթապէս ուրիշ ոչինչ չէր լրսած և այդ իսկ պատճառով վախկոտ ու թուլամորթ Ազգ մը ճանաչուած էր պատմութեան անձանօթ այդ ժողովուրդէն , Ազգէն , իսկ այդ ատեն , պարագաներու բերամար և իր Ազգ . Յեղ . Կուս . ստիպողութեան ու առաջնորդութեան տակ , պարտաւորուեր էր գէնք ձեռք առնել ու հերոսաբար կուռել իր բազմաթիւ թշնամիներու դէմ , պաշտպանելու համար իր կեանքը , գոյքը և պատիւը : Այո՛ , կը կուռէր Հայ ժողովուրդը , և կը կուռէր ոչ թէ հաւասար քանակութիւն ներկայացնող թշնամի ուժի մը դէմ , այլ կը կուռէր , կը դիմադրէր իրմէ հազարապատիկ չափով աւելի մեծ թիւ ներկայացնող թշնամու ուժերի դէմ , որոնք կատարելապէս սպառազինուած և անսպառ մանրիկներու նման պատեր էին հայաշատ գաւառները , — այն տեղերը , ուր ամիւփուած կը բնակէին Հայ Ազգի գոյութեան ատաղձը կազմող տարրերը : Գաւառներու մէջ ունեցած մեր կուռող ուժերի թիւը հազիւ թէ 300ի կը հասնէր , որոնք բոլորն ալ Յեղ . պս կամ այն կազմակերպութեանը կը պատկանէին , իսկ թշնամոյն 25-30 հազարի : Հինգ-տասը կուռող տղայքներ իր մէջ ունեցող գիւղ մը , յաճաղս պարտաւորուած էր դիմադրելու 1000-2000-3000 և նոյնիսկ 5000ի չափ թշնամի ուժերին , որոնցմէ առնուազն կէսը զինուած էին պետական կատարելագործուած զէնքերով , իսկ միւսները պաղ զէնքերով և անա-

[\*] Ռուսական հեծելազօրքեր (կօզակ) իրենց հագուստներու վրայէն բարբառական վերադրուներ հագնելով եւ իրենց գէներովը կը մասնակցէին մեր բեմամիներին : Սպաննուած բարբառ դիակներու մէջէն գտնուեց անոնց դիակները , ծայտալ վիճակի մէջ :

կան այն ամէն գործիքներով, որոցմով որ կարելի էր վերջ տալ և մեռցնել մարդկանց, բայց հակառակ այդ բոլոր առաւելութիւններին որ ունէին մեր թշնամիները, այնուամենայնիւ, անոնք, ամեն անգամ, երբ հայկական փոքրիկ գիւղ մը չըջապատելով կռիւի կը բռնուէին, վերջիվերջոյ կատարելագոյնս պարտուած, յետ կը նահանջէին, իսկ այն բազմաթիւ սայլերը, որոնց կը բերէին իրենց հետ «հայկական հարուստ գիւղերու...» աւարը, կողոպուտը տանելու համար, զարմանալիօրէն կոչուած էին ըլլալու իրենց վիրաւորեալներու կեանքին ամենավերջին հանգստարան, որոնք արիւնաթաթախ վիճակով կերթային տարածուելու իրենց սեփական սայլերուն մէջ և հոն աւնելու իրենց ամենավերջին հանգիստը... ու մահամերձ վիճակով անիծելու այն անյայտ թշնամոյն... որ պատճառ և ստեղծողն էր եղած այդ բոլոր չարիքներուն: Օ՛, կո՛յր ու միամիտ մարդիկ, անմեղ և խարուած զոհերը Ռուսական ներգամիտ կառավարութեան:

Գ.

Ամբողջ տարի ու կէս ու դեռ աւելի տեւեց 1905 թուի աղէտալից և Ռուս. պետութեան երեսը սև քօղով մը ծածկող այդ աւերիչ ընդհարումները: Ինչէր, ի՞նչ տանջանքներ ու զրկանքներ ըսէք որուն չենթարկուեցին այս երկու դեժ-բախտ աղգերը, որոնք սարսաղիմուած երկու կատաղի բաւական աղգերը, որոնք սարսաղիմուած երկու կատաղի նակներու նման ճակատ առ ճակատ կանգնած, կը բզնքտէին միմիանց, պատրաստ ամէն բօսէ ոչնչացնելու միմիանց գոյութիւնը:

Շիրակի արգաւանդ դաշտի կապուտակ երկնակամարը ծածկուած էր հրացաններու գնդակներէն բարձրացող ծուխից ու մուխիցը: Մասիսը, որբացած Հայաստանի այդ դաւաճուոր և լուռ վկան, իր մշտաճերմակ զոյգ զազաթները ծածկած էր սուգի սև քօղով մը չտեսնելու, չզգալու համար հեծկտանքները այն սրտաճմլիկ, իրական տեսարաններուն, որ կը պարզէին իր առաջ, իր իսկ փեշերու տակը սփռուած Հայկական տարաբախտ գիւղերն ու գաւառները: Սև, արտասուելի, տխուր պատկերը, որ կը պարզուէր դիտողի աչքերուն առաջ, վրէժի կատաղութեան զգացումով կը համակէր անոնց բովանդակ էութիւնը:

Հարիւրաւոր և հազարաւոր սարիներու ընթացքին մէջ գոյութիւն ունեցող այդ չէն ու բարգաւաճ գիւղերից շատերը սև-սև մոխրակոյտերու վերածուած էին. գիւղացի գեղջկուհիներ բնութեան այդ միամիտ գաւակը, իր պատառոտած ծէն՛ն ծէն՛ն եղած ցնցոտիներովը զարդարուած, նստած էր իր աւերուած գիւղի մոխրացած փլատակներու վրայ, որոնց կառավարութեան թնդանօթները քարուքանդ ընելով, այրեր ու ոչնչացուցեր էին:

Արդ, ի՞նչ կը մտածէր Հայ ժողովուրդը այդ բոլորից յետոյ. ան առաջուց իսկ բացորոշ կերպով կը տեսնէր այն խոր վիճը, որ փորեր ու պատրաստեր էին իրեն համար իր թշնամիներ և որու մէջ կուզէին թաղել զինքը իր պատմական սմբողջ կեանքովը... — Այո՛, ան կզգար այդ ամէնը և որոշ կերպով գիտէր որ միմիայն ինքն է իր կեանքի, ինչքի ու գատուոյ տէրը ու պաշտպանը. ան շատ լաւ գիտէր որ այդ երկրի մէջ արդարութիւն կոչուած բանը իրեն համար գոյութիւն չունի. իսկ այսպիսի պայմաններու մէջ, ո՞ր ուժը, ո՞ր ոյրութիւնը պիտի գար վերացնելու այն ծայրահեղ թշնամութիւնը, որ տիրած էր իր և իր թշնամի թուրք ժողովուրդի միջև: Ո՛վ — կառավարութիւնը — Ո՛հ, հեգնանք — բայց չէ՞ որ այն այդ կառավարութիւնն էր, որ տարիներէ ի վեր թախած իր աղբու ջանքերի շնորհիւ հազիւ հազ էր կարողացեր ստաջ բերել այդ արիւնալի կռիւները, որու թողած սև, միստող մոխրակոյտերու վրայ պիտի ցցէր իր երկգլխեան արծիւի ուր-սուր մագիլները: Բայց, միաժամանակ, պարզ էր և այն շմարտութիւնը թէ, կեանքի մէջ երեւան եկող ամէն մի րեւոյթ, ինչպէս իր ծնունդը նոյնպէս և իր վախճանը ունի և հետեւարար, որքան ալ խոր թաղուած ըլլար այդ չարիքներու արմատները, չէր կրնար իր անյայտութեան մէջ կանուռն մնալ և անպայմանօրէն որ մը պիտի յայտնագործուէր նոյն զինքը խուզարկող մտքին առաջ, ու հրապարակով պիտի ամէր պարտութեան ու խայտառակութեան դառն բաժակը, և այդ ճշմարիտ վարդապետութեան կատարեալ հաւատքովը արուած, Հայ կուռղ երեսասարդը, իր փրկարար զէնքէն զատ, որու հետ ձուլուած, մարմնացած էր, սկսաւ ուրիշ անապարձով եւս աշխատիլ այդ արիւնալի կռիւներու ստաջը

առնելու: Ան իր մէկ ձեռքովը բռնած իր հրաշէկ հրացանը  
 և միւսովը՝ հաշտութեան ձիթենի ճիւղը, զանազան ձեւերու  
 ու պատրուակներու տակ մուտ կը գործէր թրքական չըր-  
 ջաններու մէջ ու իր աղբու պրօքականդայի միջոցով, կը մեր-  
 կացնէր կառավարութեան, երկրի իշխանութեան շարատենն  
 այն նպատակները, որոնցմով կառաջնորդուէր թուրք խու-  
 ժանը:

Այսպէս, Հայ ժողովուրդը, իր քաղաքակրթուած մտքը  
 չնորհիւ, այս անգամ ալ կրցաւ յաղթայարել իր դարանակալ  
 թշնամուն և տապալել զայն: Արդարութիւնը յաղթեց և այն  
 մութ-մութ ամպերը, որոնք եկեր ու կուտակուել  
 էին Կովկասի կապոյտ երկնակամարի վրայ, հետզհետէ ան-  
 յայտանալու ուղին բռնեցին ու աներեւոյթացան, իսկ ընդ-  
 հարուող այդ երկու աղգերու երկրորդ Աւարայրը դարձու  
 Կովկասի Հայկական դաւառները, սկսան դանդաղ քայլերու  
 վերադառնալ իրենց հին կեանքին, թէև միշտ կասկածոս...  
 միշտ անվստահ... դէպի իրենց մօտաւոր ապագան, որու կաղ-  
 մութիւնը դեռեւս մտախրապատ ու անորոշ էր...:

Այո՛, յաղթեց Հայ ժողովուրդը, և պատուելով երկրի իշխանու-  
 թեան հազած անմեղովիեան ձերմակ պատմութեանը, դուրս բե-  
 բեց զայն իր իսկական մեղապարտի կարմիր չապիկովը: Յաղթե-  
 Հայ ժողովուրդը և յալթեց անոր համար, որովհետեւ գի-  
 տէր այդպիսի յաղթութիւնները ձեռք բերելու գաղանիքը  
 այն է.— Ազգային գոյութեան արտոնացող ծանր աղիքի մը  
 առաջ Ազգային ՄԻԱՅՆՍԻ ԱՌԺԵՐՈՎ ԴԻՄԱԴՐԵԼՈՒ ՍՄԵ  
 ՆԱՍՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՁԸ ու այդպէս ալ ըրաւ, այդ ուղղու-  
 րեանք գործեց ու սիրացաւ յայրութեան դափնեայ պսակին:

Վ Ե Ր Ձ



«Ազգային գրադարան»



NL0412065

5832